ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2023 թվականի թիվ 217-Ա

««ԱՐԲԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԱՐԳԵՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԱՆՁԱՆՑ ԽՄԲԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի մայիսի 16-ի նիստում, քննարկելով ««Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 5-ի ««Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 6-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 6-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-00030/23 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

«Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **«Արբան» ընկերություն**) թիվ 6-Ա որոշումը ստացել է 2023 թվականի հունվարի 13-ին և դրա առնչությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի մարտի 10-ի թիվ 002208 գրությամբ «Արբան» ընկերությանն առաջարկվել է Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության կողմից կազմված «Թիվ ՀԳ-00030/23 վարույթով պատասխանող «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերության վարքագծում հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության մասին» տեղեկանքի (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) առնչությամբ Հանձնաժողով ներկայացնել դիրքորոշում:

«Արբան» ընկերությունը Տեղեկանքը ստացել է 2023 թվականի մարտի 16-ին և դրա առնչությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 4-ի ««Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-00030/23 վարույթով «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես նոր պատասխանող ներգրավելու և թիվ ՀԳ-00030/23 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 144-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 144-Ա որոշում**) «Արբան» ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-00030/23 վարույթով «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Պարգև» ընկերություն**) ներգրավվել է որպես նոր պատասխանող և Վարույթի ժամկետը 2023 թվականի ապրիլի 5-ից եռամսյա ժամկետով երկարաձգվել է:

«Պարգև» ընկերությունը թիվ 144-Ա որոշումը ստացել է 2023 թվականի ապրիլի 4-ին և դրա առնչությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

<u>2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.</u>

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը 2023 թվականի հունվարի 4-ի թիվ 43 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է «Արբան» ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ՝ հայտնելով, որ Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 278-Ա հրամանի հիման վրա հսկիչ գնմամբ ձեռքբերված «Արբան» ընկերության կողմից արտադրված «Աշտարակ Կաթ» ապրանքային նշանով, «Թթվասեր Դասական» անվանումով, 400 գրամ քաշով, 18% յուղայնությամբ ապրանքում (այսուհետ նաև՝ **Ապրանք**) առկա է բուսական յուղ և չի համապատասխանում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 67 որոշմամբ ընդունված «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին (ՄՄ ՏԿ 033/2013) (այսուհետ նաև՝ **Կանոնակարգ**):

Հաշվի առնելով, որ Ապրանքն իրացնում է «Պարգև» ընկերությունը, ինչպես նաև «Արբան» ընկերության և «Պարգև» ընկերության միջև առկա է փոխկապվածություն, Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը ներկայացրել է որոշման նախագիծ՝ առաջարկելով «Արբան» ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-00030/23 վարույթով «Պարգև» ընկերությանը ներգրավվել է որպես նոր պատասխանող:

Վարույթը հարուցված է «Արբան» ընկերության և «Պարգև» ընկերության վարքագծում հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

3. Վարույթի մասնակիցների դիրքորոշումը.

«Արբան» ընկերությունը և «Պարգև» ընկերությունը սույն գործի վերաբերյալ որևէ դիրքորոշում չեն ներկայացրել:

4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

1) Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 278-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի դեկտեմբերի 19-ին «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում իրականացվել է հսկիչ գնում (այսուհետ նաև՝ **Հսկիչ գնում**), որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 278 արձանագրությունը:

Հսկիչ գնման արդյունքում, ի թիվս այլնի, ձեռք է բերվել Ապրանքը, որի տուփի վրա առկա է հետևյալ մակնշումը. ««Աշտարակ Կաթ», «Թթվասեր Դասական», ԱՌԱՆՑ ԿՈՆՍԵՐՎԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԲԻՈՏԻԿՆԵՐԻ, 18%, ISO 22000, 400գ.±3%, Արտադրող՝ «ԱՐԲԱՆ» ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան, Դրոյի թ., 13, Производитель: ООО «Арбан», Армения, г. Ереван, ул. Дро 13, ՏՊ/ТУ АМ 82030580.8504-2020, Յուղի զանգվածային մասը 18%, Բաղադրությունը՝ կաթի սերուցք, չոր յուղազերծ կաթ, բակտերիալ մերան: Պիտանելիության ժամկետի վերջում կաթնաթթվային բակտերիաների քանակը ոչ պակաս 1×10^7 ԳԱՄ/գ: Պահել 2ºC - 6ºC և 75% ոչ ավելի օդի հարաբերական խոնավության պայմաններում: Արտադրման ամսաթիվը, պիտանելիության վերջնաժամկետը տես տարայի վրա: Սննդային արժեքը 100գ. սպիտակուցներ 2.5գ, ճարպեր 18գ, ածղաջրեր 3.2գ, էներգետիկ արժեքը՝ 184.8 կկալ, 773.6 կՋ:»: Բացի այդ, Ապրանքի մակնշման համաձայն՝ պիտանելիության ժամկետն է՝ 19.12.2022 – 28.12.2022:

2) Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի՝ 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Փորձաքննություն իրականացնելու մասին» թիվ 309-Ա հրամանի հիման վրա, ի թիվս այլ ապրանքների, Ապրանքն ուղարկվել է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ նաև՝ **ՊՈԱԿ**) լաբորատոր փորձաքննության՝ Ապրանքում բուսական յուղի առկայությունը և յուղայնության չափը պարզելու նպատակով:

ՊՈԱԿ-ը 2023 թվականի հունվարի 4-ին Հանձնաժողով է ներկայացրել 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2149 փորձարկման արձանագրությունը (այսուհետ նաև՝ թիվ 2149 փորձարկման արձանագրություն), որի համաձայն՝ Ապրանքը բուսական յուղի առկայությամբ չի համապատասխանում Կանոնակարգին:

3) Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի հունվարի 31-ի թիվ ԳԳ-79 գրությամբ Հանձնաժողովը դիմել է Պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ **ՊԵԿ**)՝ խնդրելով տրամադրել «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերության հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը 2023 թվականի փետրվարի 2-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ

4) Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի փետրվարի 24-ի թիվ 001674 գրությամբ Հանձնաժողովը դիմել է Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. «Արբան» ընկերության կողմից 2021 թվականի հունիսի 8-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «թթվասեր» անվանումով ապրանքների իրացումից ստացված հասույթի չափի վերաբերյալ՝ առանձնացված ըստ ամիսների,

2. «Արբան» ընկերության կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «թթվասեր» անվանումով ապրանքների իրացումից ստացված հասույթի չափի վերաբերյալ՝ առանձնացված ըստ ամիսների,

3. «Արբան» ընկերության 2021 և 2022 թվականների տարեկան հասույթի չափերի վերաբերյալ՝ առանձնացված ըստ տարիների:

Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն 2023 թվականի մարտի 13-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ

5) Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի մարտի 22-ի թիվ 002547 գրությամբ «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 278-Ա հրամանի հիման վրա հսկիչ գնմամբ ձեռքբերված «Արբան» ընկերության կողմից արտադրված, 2022 թվականի դեկտեմբերի 19-ից 28-ը պիտանելիության ժամկետով, «Աշտարակ Կաթ» ապրանքային նշանով, 400 գրամ քաշով, 18% յուղայնությամբ թթվասերների ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

«Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2023 թվականի մարտի 24-ին Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ «Արբան» ընկերության կողմից արտադրված, 2022 թվականի դեկտեմբերի 19-ից 28-ը պիտանելիության ժամկետով, «Աշտարակ Կաթ» ապրանքային նշանով, 400 գրամ քաշով, 18% յուղայնությամբ թթվասերները «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մատակարարել է «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հայաստանյան մասնաճյուղը:

6) Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկության համաձայն.

1. «Արբան» ընկերությունը գրանցվել է
2. «Արբան» ընկերության մասնակիցներն են՝ Խորեն Ավանեսյան Իվանի բաժնեմասի չափը՝ Աշոտ Հակոբյան Հակոբի , բաժնեմասի չափը՝ , «Արբան» ընկերության իրավանախորդներն են՝ «Մթնշաղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (443.110.1344899) և «Պարգև» ընկերությունը (353.110.20052), 2021 թվականի հունիսի 8-ից «Արբան» ընկերության տնօրենն է՝ Իվան Խորենի Ավանեսյանը :
3. «Պարգև» ընկերության միակ (բաժնեմասի չափը՝ 100%) մասնակիցն է Իվան Ավանեսյան Խորենի

«Պարգև» ընկերության իրավահաջորդներն են «Արբան» ընկերությունը (443.110.1181553) և «Մթնշաղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (443.110.1344899), 2006 թվականի ապրիլի 11-ից «Պարգև» ընկերության տնօրենն է՝ Իվան Խորենի Ավանեսյանը

4. «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման տնօրեն է՝ Խորեն Ավանեսյան Իվանի

5. «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման տնօրեն է՝ Իվան Ավանեսյան Խորենի

7) Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի մարտի 25-ի թիվ 245 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ-ին՝ խնդրելով տրամադրել «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման կողմից 2021 և 2022 թվականներին հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը 2023 թվականի ապրիլի 4-ին Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝

8) ՊԵԿ տեղեկատվական տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝

<u>5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>

1. «Արբան» ընկերության կողմից Ապրանքն արտադրվել և մակնշվել է որպես թթվասեր:

2. Թիվ 2149 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքը պարունակում է բուսական յուղ և չի համապատասխանում Կանոնակարգի պահանջներին:

3. Ապրանքի մակնշման համաձայն՝ այն արտադրվել է 2022 թվականի դեկտեմբերի 19-ին:

4. Ապրանքն իրացրել է «Պարգև» ընկերությունը:

5. «Արբան» ընկերությունը գրանցվել է

6. «Արբան» ընկերությունը ՀՀ-ում հանդես է գալիս «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման միջոցով, իսկ «Պարգև» ընկերությունը՝ «Պարգև» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության հայստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման միջոցով:

7. «Արբան» ընկերության մասնակիցներն են՝ Խորեն Ավանեսյան Իվանի բաժնեմասի չափը՝ Աշոտ Հակոբյան Հակոբի բաժնեմասի չափը՝ 2021 թվականի հունիսի 8-ից «Արբան» ընկերության տնօրենն է՝ Իվան Խորենի Ավանեսյանը

8. «Պարգև» ընկերության միակ (բաժնեմասի չափը՝ 100%) մասնակիցն է Իվան Ավանեսյան Խորենի 2006 թվականի ապրիլի 11-ից «Պարգև» ընկերության տնօրենն է՝ Իվան Խորենի Ավանեսյանը

9. «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման տնօրեն է՝ Խորեն Ավանեսյան Իվանի

10. «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման տնօրեն է՝ Իվան Ավանեսյան Խորենի

11. Իվան Խորենի Ավանեսյանը և Խորեն Իվանի Ավանեսյանը հանդիսանում են համապատասխանաբար հայր և որդի:

12. «Արբան» ընկերությունը և «Պարգև» ընկերությունը հանդես են գալիս միևնույն ապրանքային նշանով:

13. «Արբան» ընկերությունը և «Պարգև» ընկերությունը Վարույթով իրենց վերագրվող իրավախախտման վերաբերյալ որևէ առարկություն չեն ներկայացրել:

14. ՊԵԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝

15. Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝

16. «Արբան» ընկերության կողմից «թթվասեր» անվանումով ապրանքների իրացումից ստացված հասույթի չափի վերաբերյալ

17. ՊԵԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝

18. ՊԵԿ տեղեկատվական տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝

19.

6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.

1) Իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.

Վարույթը հարուցված է «Արբան» ընկերության և «Պարգև» ընկերության կողմից արտադրված բուսական յուղի առկայությամբ Ապրանքը որպես թթվասեր մակնշելու և իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Հանձնաժողովը, նախևառաջ, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումների պարզաբանմանը.

1) Արդյո՞ք տվյալ դեպքում «Արբան» և «Պարգև» ընկերությունները կարող են հանդես գալ որպես իրավախախտման ինքնուրույն սուբյեկտ.

2) Ինչպե՞ս է դրսևորվում հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմը.

Առաջին հարցադրման կապակցությամբ.

Սույն գործի փաստական հանգամանքներից ուղղակիորեն հետևում է, որ.

▪«Արբան» ընկերության կողմից Ապրանքն արտադրվել և մակնշվել է որպես թթվասեր,

▪թիվ 2149 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքը պարունակում է բուսական յուղ և չի համապատասխանում Կանոնակարգի պահանջներին,

▪«Արբան» ընկերությունը և «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանումը

▪ Ապրանքն իրացնում է «Պարգև» ընկերությունը,

▪«Արբան» ընկերությունը ՀՀ-ում հանդես է գալիս «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման միջոցով, իսկ «Պարգև» ընկերությունը՝ «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման միջոցով:

Միաժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ

▪ «Արբան» ընկերության մասնակիցներն են՝ Խորեն Ավանեսյան Իվանի

բաժնեմասի չափը՝ Աշոտ Հակոբյան Հակոբի

բաժնեմասի չափը՝ 2021 թվականի հունիսի 8-ից «Արբան» ընկերության տնօրենն է՝ Իվան Խորենի Ավանեսյանը

▪ «Պարգև» ընկերության միակ (բաժնեմասի չափը՝ 100%) մասնակիցն է Իվան Ավանեսյան Խորենի

2006 թվականի ապրիլի 11-ից «Պարգև» ընկերության տնօրենն է՝ Իվան Խորենի Ավանեսյանը

▪ «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման տնօրեն է՝ Խորեն Ավանեսյան Իվանի

▪ «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման տնօրեն է՝ Իվան Ավանեսյան Խորենի

▪ Իվան Խորենի Ավանեսյանը և Խորեն Իվանի Ավանեսյանը հանդիսանում են համապատասխանաբար հայր և որդի:

▪ «Արբան» ընկերությունը և «Պարգև» ընկերությունը հանդես են գալիս միևնույն ապրանքային նշանով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ անձանց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ

վերահսկողություն, և որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

3) կազմակերպությունները և ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, եթե նրանք փոխկապվածության կամ վերահսկողության ուժով գործում են ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված,

9) կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձն առնվազն մեկ տարի իրականացնում է կազմակերպությունների միանձնյա գործադիր մարմինների իրավասությունները,

11) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնց կողմից շահագործվող առևտրային օբյեկտներն ընդհանուր կառավարման ներքո են կամ գործում են միևնույն ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո,

12) ֆիզիկական անձը, նրա ամուսինը, ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, եղբայրը կամ քույրը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտ է անհատ ձեռնարկատերը, իրավաբանական անձը, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ կամ անձանց միություն, իսկ սույն օրենքով նախատեսված՝ համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության և տնտեսական գործունեության համակարգման դեպքերում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը:

Վերոգրյալ փաստերի և իրավական նորմերի համադրությունից բխում է, որ «Արբան» ընկերության և «Պարգև» ընկերության միջև առկա է փոխկապվածություն, և վերջիններս գործում են ընդհանուր տնտեսական շահով, ինչպես նաև գործում են միևնույն ապրանքային նշանի ներքո, հետևաբար «Արբան» ընկերությունը և «Պարգև» ընկերությունը հանդիսանում են անձանց խումբ (այսուհետ նաև՝ **Անձանց խումբ**), հանդես են գալիս որպես մեկ տնտեսավարող սուբյեկտ և սույն գործով որպես ենթադրյալ իրավախախտ տնտեսավարող սուբյեկտ դիտարկվում է Անձանց խումբը: Ընդ որում, հարկ է շեշտել, որ անձանց խմբում ներառված յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ ամբողջ ծավալով պատասխանատու է անձանց խմբում ներառված մյուս սուբյեկտների վարքագծի, գործողությունների և դրանց բացասական հետևանքների համար:

<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է վարքագիծը անբարեխիղճ մրցակցություն որակելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունը կամ վարքագիծը, եթե այն.

- հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,
- խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Այսինքն, օրենսդրի կողմից սահմանված անբարեխիղճ մրցակցության առանձին դրսևորումների սահմանումը, ըստ էության, Օրենքի 16-րդ հոդվածի մասնավոր դեպքերի առարկայացումն է և, հետևաբար, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների քննարկման անհրաժեշտությունը բացակայում է անբարեխիղճ մրցակցության մասնավոր դեպքերից յուրաքանչյուրի, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության դեպքում:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալ կարգավորումների հիման վրա Հանձնաժողովը հարկ է համարում, նախևառաջ, արձանագրել, որ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցությունն իր բնույթով ունի ձևական կազմ, այսինքն՝ հետևանքի վրա հասնելը՝ սպառողի մոլորվելու փաստը, վարքագիծը Օրենքի 21-րդ հոդվածով որակելու պարտադիր և անհրաժեշտ պայման չէ: Ըստ այդմ, վարքագիծը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտում որակելու համար բավարար է միայն մոլորվելու հնարավորությունն ու հավանականությունը, այլ ոչ թե ինքնին մոլորվելու փաստը:

Մյուս կողմից, հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն իրավախախտման ձևական բնույթը դրսևորվում է նրանում, որ արարքը կատարման փաստով համարվում է ավարտված: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ վայրում, այդ թվում՝ ինտերնետային կայքի տարբեր բաժիններում, այլ միջոցով կամ հետագայում անհրաժեշտ տեղեկությունները հայտնելը կամ այլ կերպ հասանելի դարձնելը իրավախախտումը չի վերացնում:

Միևնույն ժամանակ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրն այս իրավախախտման օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորություն:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն առկա չէ, եթե կարող է վնաս հասցվել սպառողների կյանքին, առողջությանը, անվտանգությանը, հասարակական կամ պետական անվտանգությանը կամ շրջակա միջավայրին: Այլ կերպ ասած՝ եթե տնտեսավարող սուբյեկտի վարքագիծը վնասում է կամ կարող է վնասել բացառապես հիշատակված հանրային շահերը, ապա այն դուրս է Հանձնաժողովի իրավասության տիրույթից:

Կանոնակարգի 5-րդ կետի 101-րդ պարբերության համաձայն՝ «թթվասեր» է համարվում թթվակաթնային մթերքը, որն արտադրվել է սերուցքը թթվեցնելու միջոցով՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթնային արտադրանք, օգտագործելով մերանային միկրոօրգանիզմներ (լակտոկոկներ կամ լակտոկոկների և ջերմասեր կաթնաթթվային ստրեպտոկոկների խառնուրդներ), որում կաթնային ճարպի զանգվածային բաժինը կազմում է 10 տոկոսից ոչ պակաս:

Կանոնակարգի 5-րդ կետի 15-րդ պարբերության՝ «թթվակաթնային մթերք» է համարվում կաթնային մթերքը կամ կաթնային բաղադրյալ մթերքը, որն արտադրվել է ակտիվ թթվայնության (pH) ցուցանիշի նվազեցմանը, կաթնային սպիտակուցի թթվայնության և կոագուլյացիայի ցուցանիշի բարձրացմանը հանգեցնող, կաթի և (կամ) կաթնային մթերքների և (կամ) դրանց՝ այն ոչ կաթնային բաղադրիչներով խառնուրդների թթվեցման եղանակով, որոնց ներմուծման նպատակը կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելը չէ (թթվեցումից առաջ և հետո), կամ առանց նշված բաղադրիչների ավելացման՝ օգտագործելով մերանային միկրոօրգանիզմներ, և պարունակում է սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 1 հավելվածով սահմանված քանակությամբ կենդանի մերանային միկրոօրգանիզմներ:

Կանոնակարգի 5-րդ կետի 43-րդ պարբերության համաձայն՝ «կաթնային մթերք» է համարվում այն սննդամթերքը, որն արտադրվել է կաթից և (կամ) դրա բաղկացուցիչ մասերից և (կամ) կաթնային մթերքներից՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթի վերամշակումից ստացված մթերքներ (բացառությամբ կաթ պարունակող մթերքի արտադրության ընթացքում կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքների), չօգտագործելով ոչ կաթնային ճարպեր ու ոչ կաթնային սպիտակուցներ, և որի բաղադրության մեջ կարող են առկա լինել կաթի վերամշակման համար ֆունկցիոնալ առումով անհրաժեշտ բաղադրիչներ:

Կանոնակարգի 5-րդ կետի 45-րդ պարբերության համաձայն՝ «կաթնային բաղադրյալ մթերք» է համարվում այն սննդամթերքը, որն արտադրվել է կաթից և (կամ) դրա բաղկացուցիչ մասերից և (կամ) կաթնային մթերքներից՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերք (բացառությամբ կաթ պարունակող մթերքների արտադրության ընթացքում կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքների) և ոչ կաթնային բաղադրիչներ (բացառությամբ ոչ կաթնային ծագման ճարպերի, որոնք ներմուծվում են բաղադրության մեջ որպես ինքնուրույն բաղադրամասեր (չի տարածվում վաղ տարիքի երեխաների սննդի համար

նախատեսված կաթնամթերքի վրա, որն արտադրելիս օգտագործվում են ոչ կաթնային ծագման ճարպեր), որոնք ավելացվում են՝ չունենալով կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելու նպատակ: Ընդ որում, պատրաստի մթերքում կաթի բաղկացուցիչ մասերը պետք է լինեն 50 տոկոսից ավելի, պաղպաղակում և կաթի վերամշակումից ստացվող քաղցր մթերքներում՝ 40 տոկոսից ավելի:

Կանոնակարգի 73-րդ կետի համաձայն՝ կաթնային բաղադրյալ մթերքների անվանումները պետք է բաղկացած լինեն կաթնային մթերքի համար սահմանված հասկացություններից և լրացվեն դրանց ավելացված ոչ կաթնային բաղադրիչների առկայության մասին տեղեկատվությամբ, օրինակ՝ «կաթնաշոռ՝ մրգերի փոքր կտորներով», «կեֆիր մրգային», «պանիր՝ հալած, խոզապուխտով»:

Կանոնակարգի 82-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ կաթ պարունակող մթերքների և կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքների համար չի թույլատրվում օգտագործել կաթի և կաթնային մթերքների, դրանց տարբեր համադրությունների համար, այդ թվում՝ դրանց անվանումներում, ապրանքային նշաններում (առևտրային նշաններում) (առկայության դեպքում) կամ նման մթերքների մակնշման ժամանակ ստեղծված անվանման մեջ, պիտակների վրա, ցանկացած նպատակներով սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված հասկացությունները, որոնք կարող են սպառողին շփոթության մեջ գցել, ինչպես նաև բառեր, որոնք ձևավորվել են կաթնային մթերքների հասկացություններից (օրինակ՝ «պանրանման», «պանրային», «պանրագործական», «շրդանային», «թթվասերիկ», «կաթնաշոռիկ», «սերուցքիկ», «կարագիկ», «կաթնաշոռիկ» և այլն):

Վկայակոչված դրույթների համադրումից հետևում է.

1. «թթվասեր» ապրանքատեսակը կարող է լինել միայն կաթնային մթերք և կաթնային բաղադրյալ մթերք,

2. կաթնային մթերք հանդիսացող թթվասերի մեջ չի թույլատրվում օգտագործել ոչ կաթնային ճարպեր ու ոչ կաթնային սպիտակուցներ,

3. կաթնային բաղադրյալ մթերք հանդիսացող թթվասերի մեջ թույլատրվում է ավելացնել ոչ կաթնային բաղադրիչներ, սակայն դրանց ավելացումը պետք է նպատակ չունենա փոխարինել կաթի բաղկացուցիչ մասերը, իսկ անվանումը պետք է լինի ոչ թե «թթվասեր», այլ օրինակ՝ «թթվասեր՝ ընկույզով», «թթվասեր՝ ելակով» և այլն,

4. Կանոնակարգի իմաստով թթվասեր չհամարվող ապրանքները մակնշելիս չի թույլատրվում օգտագործել կաթի և կաթնային մթերքների, դրանց տարբեր համադրությունների համար Կանոնակարգով սահմանված հասկացությունները, այդ թվում՝ «թթվասեր» բառը: Ավելին, արգելվում է օգտագործել նույնիսկ «թթվասերիկ», «թթվասերային մթերք» և նմանատիպ այլ հասկացություններ:

<u>Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.</u>

Անձանց խմբի կողմից Ապրանքն արտադրվել և իրացվել է որպես թթվասեր, մինչդեռ թիվ 2149 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքը

պարունակում է բուսական յուղ և չի համապատասխանում Կանոնակարգի պահանջներին:

Ստացվում է, որ Անձանց խմբի կողմից Ապրանքը մակնշվել է որպես թթվասեր, Ապրանքի բաղադրության մեջ, ըստ մակնշման, նշված չէ, որ դրանում առկա է բուսական յուղ, մինչդեռ թիվ 2149 արձանագրության համաձայն՝ Ապրանքում հայտնաբերվել է բուսական յուղ որպես ինքնուրույն բաղադրամաս և Կանոնակարգի իմաստով այն չի համարվում կաթնային մթերք հանդիսացող թթվասեր: Այսինքն, Ապրանքը որպես թթվասեր իրացնելու և Ապրանքի մակնշման մեջ բուսական յուղի առկայության վերաբերյալ տեղեկատվության բացակայության պայմաններում, բացառապես լաբորատոր փորձաքննության միջոցով է հնարավոր տեղեկանալ Ապրանքում բուսական յուղի առկայության մասին:

Նշվածից բխում է, որ Ապրանքի գնման ժամանակ սպառողներն Ապրանքի բաղադրության մեջ բուսական յուղի առկայության մասին որևէ կերպ չեն կարող տեղեկանալ: Մյուս կողմից էլ սպառողները Ապրանքի վրա «թթվասեր» բառի մակնշումը տեսնելով՝ կարող են մտածել, որ այն հանդիսանում է կաթնային մթերք և դրանում առկա չէ բուսական յուղ:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը փաստում է, որ Անձանց խմբի կողմից բուսական յուղի առկայությամբ Ապրանքը որպես թթվասեր մակնշելը և իրացնելը կարող է.

1. հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), քանի որ Ապրանքը մակնշվել և իրացվել է որպես թթվասեր,

2. սպառողներին հնարավորություն չտալ ամբողջական պատկերացում կազմել Ապրանքի վերաբերյալ, քանի որ Ապրանքի մակնշվածքում բացակայում է բուսական յուղի առկայության մասին տեղեկատվությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Անձանց խմբի կողմից բուսական յուղի առկայությամբ Ապրանքը որպես թթվասեր մակնշելը և իրացնելը պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում: Ընդ որում, Անձանց խումբը Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման վերաբերյալ որևէ առարկություն չի ներկայացրել:

<u>2) Անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 24-ի «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 31-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը հարուցված և իրականացվող վարույթներում պատասխանատվության միջոցի ընտրությունն ու տուգանքի հաշվարկումն իրականացվում են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ ակցիաների առնչությամբ դրսևորված հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ իրավախախտումների, որոնց դեպքում պատասխանատվության միջոցի ընտրությունն ու տուգանքի հաշվարկումն իրականացվում են սույն որոշմամբ սահմանված կարգով:

Մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը գործող խմբագրությամբ Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 6-րդ կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է վարույթի ընթացքում հաստատված փաստական հանգամանքների քննարկման

արդյունքում Հանձնաժողովի հայեցողությամբ՝ հաշվի առնելով Մեթոդաբանությամբ ամրագրված դրույթները և վարույթի առանձնահատկությունները:

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ փուլերով.

1) որոշվում է տուգանքի բազային գումարը.

2) գնահատվում են վարույթի ընթացքում հաստատված ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, և հիմքերի առկայության դեպքում բազային գումարը ենթարկվում է համապատասխան փոփոխությունների.

3) Մեթոդաբանությամբ նախատեսված դեպքերում համապատասխանեցվում է պատասխանատվության միջոցը:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը տուգանքը հաշվարկում է Տ = Բ + Բ x (Ծ - Մ) բանաձևով, որտեղ՝ Տ-ն տուգանքի չափն է, Բ-ն տուգանքի բազային գումարն է, Ծ-ն բոլոր ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է, Մ-ն բոլոր մեղմացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է:

<u>Բազային գումարի հաշվարկը.</u>

Մեթոդաբանության 7-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունը ըստ բնույթի մրցակցային իրավախախտում է:

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ մրցակցային իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը որոշվում է ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարի, իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար սահմանված տոկոսի և իրավախախտման տևողության արտադրյալի հաշվարկման միջոցով՝ Բ = Հ x Խ x Ժ բանաձևով, որտեղ՝ Բ-ն տուգանքի բազային գումարն է մրցակցային իրավախախտումների դեպքում, Հ -ն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարն է, Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խումբն է, Ժ-ն իրավախախտման տևողությունն է:

Ապրանքի իրացումից ստացված հասույթ.

Մեթոդաբանության 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների իրացումից ստացված հասույթ է համարվում իրավախախտման առարկա հանդիսացող կամ իրավախախտման մեջ ներգրավված ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որպես բազային գումարի հաշվարկման միավոր ապրանքի իրացումից ստացված հասույթի չափի փոխարեն հիմք է ընդունում տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա ընդհանուր հասույթի չափը հետևյալ դեպքերում.

1) պետական մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա անհնար է որոշել ապրանքների իրացումից ստացված հասույթի չափը, և տնտեսավարող սուբյեկտի կողմից չեն ներկայացվել ապացույցներ, այդ թվում՝ ապրանքատեսակի ողջ ծավալի վերաբերյալ, կամ.

2) պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված ապրանքների իրացումից ստացված հասույթի չափի վերաբերյալ տեղեկատվության միջև առկա է հակասություն, և գործում առկա ապացույցների հիման վրա անհնար է որոշել ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթի չափը:

Մեթոդաբանության 16-րդ կետի համաձայն՝ ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի գումարի հաշվարկումն իրականացնելիս հիմք է ընդունվում իրավախախտման դադարեցման պահին նախորդող տարվա վաճառքի հասույթը կամ ընդհանուր հասույթը:

Մեթոդաբանության 17-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում իրացման հասույթի կամ ընդհանուր հասույթի չափի հաշվարկումն իրականացվում է վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարվա վաճառքի հասույթի կամ ընդհանուր հասույթի չափից:

Մեթոդաբանության 19-րդ կետի համաձայն՝ անձանց խմբի կողմից Օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովը նախատեսված տուգանքը նշանակում է այն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք իրենց գործողությամբ կամ վարքագծով մասնակցություն են ունեցել իրավախախտմանը կամ իրավախախտման հետևանքով ստացել են կամ կարող էին ստանալ շահույթ կամ առավելություն կամ հայտնվել են առավել բարենպաստ պայմաններում, և տուգանքը հաշվարկում է այդ տնտեսավարող սուբյեկտների հասույթների ընդհանուր գումարից:

Մեթոդաբանության 21-րդ կետի համաձայն՝ ընդհանուր հասույթը որպես բազային գումարի հաշվարկման միավոր դիտարկելիս Հանձնաժողովը հիմք է ընդունում տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա ընդհանուր հասույթի 1 տոկոսը:

Սույն գործի փաստերի համաձայն՝

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը,

Իրավախախտման ծանրության խումբը.

Հիմք ընդունելով Մեթոդաբանության 20-րդ կետի 3-րդ ենթակետը՝ սույն գործով ծանրության խումբը պետք է հաշվարկել 2.5 տոկոս դրույքաչափով:

Իրավախախտման տևողությունը.

Իրավախախտման տևողությունը հաշվարկելիս հիմք են ընդունվում Մեթոդաբանության 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերը:

Հաշվի առնելով, որ

Անձանց խմբի կողմից իրավախախտման կատարման ժամանակահատվածը 12 ամսից պակաս է, հետևաբար, հիմք ընդունելով Մեթոդաբանության 23-րդ կետը, իրավախախտման տևողության գործակիցը 1 է:

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է

ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

«Պարգև» ընկերության մասով.

Բ= Հ x Խ x Ժ= ՀՀ դրամ:

«Արբան» ընկերության մասով.

Բ= Հ x Խ x Ժ= ՀՀ դրամ:

Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.

Մեթոդաբանության 31-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում է ծանրացնող և մեղմացնող հանգամանքները և վարչական ակտում արտացոլում միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 32-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 27-32-րդ կետերով սահմանված են պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն դեպքում Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովի կողմից հաշվի առնվող այլ հանգամանքներ առկա չեն:

Այսպիսով, ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է իսկ մեղմացնող հանգամանքներինը՝

<u>Տուգանքի հաշվարկը.</u>

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է 17 504 452 ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = = 17 504 452.7 ՀՀ դրամ:

Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների համադրության արդյունքում և հիմք ընդունելով թիվ 395-Ն որոշումը, Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության նկատմամբ անհրաժեշտ նշանակել 17 504 452 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր չորս հազար չորս հարյուր հիսուներկու) ՀՀ դրամի չափով տուգանք:

3) <u>Անձանց խմբին հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ</u>.

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ պարագայում հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցությունը դրսևորվել է Անձանց խմբի կողմից մինչև Վարույթ հարուցելու օրն արտադրված Ապրանքի իրացման միջոցով:

Վարույթը հարուցվել է 2023 թվականի հունվարի 5-ին, իսկ Ապրանքի պիտանելիության ժամկետը 10 օր է: Հետևաբար սույն որոշման ընդունման օրվա դրությամբ Ապրանքը շրջանառության մեջ չի կարող գտնվել, քանի որ լրացել է դրա պիտանելիության ժամկետը, որպիսի պայմաններում Անձանց խմբին խախտումը շտկելու վերաբերյալ հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

<u>7. Եզրափակիչ մաս.</u>

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ««Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 19-ին արտադրված բուսական յուղի առկայությամբ «Աշտարակ Կաթ» ապրանքային նշանով, «Թթվասեր Դասական» անվանումով, 400 գրամ քաշով, 18% յուղայնությամբ ապրանքը որպես թթվասեր մակնշելը և իրացնելը որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար ««Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» անձանց խմբի նկատմամբ նշանակել 17 504 452 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր չորս հազար չորս հարյուր հիսուներկու) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Սույն որոշումն «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից և «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից յուրաքանչյուրի նկատմամբ ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Արբան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և «Պարգև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման 2-րդ կետով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2023 թ. մայիսի 16
Երևան